



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, +374(60-88-89-99), էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2023 թվականի N 330-Ա

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> ՀՀ օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2023RWMRBL, ծածկագիրը և հիմք ընդունելով Արամայիս Իսահակի Թանգամյանի դիմումը՝ իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Հարավ-Արևմտյան 2-րդ փողոց թիվ 27 հողամաս հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի Արամայիս Իսահակի Թանգամյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Հարավ-Արևմտյան 2-րդ փողոց թիվ 27 վարչական տարածքում գտնվող 04-006-0093-0013 կադաստրային ծածկագրով 0,103 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 233,1 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությունները, / 233,1 քմ մակերեսով բնակելի տուն կառուցված 2020թ. /:

2. Ինքնակամ կառույցների օրիկանացման համար սահմանված վճարը կազմում է 281818 / երկու հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր տասնութ / ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Արամայիս Իսահակի Թանգամյանը /նույնականացման քարտ 013049556, տրված 22.02.2022թ ,008 -ի կողմից / պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ

համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին 281818 / երկու հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր տասնութ / ՀՀ դրամ:/, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2023 թվականի մարտի 28
Խոյ համայնք գ.Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2023 թվականի N 329-Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828 որոշմամբ հաստատված կարգը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Ա.Ավագյան փողոց 15/1 հողամաս հասցեում գտնվող 04-006-0053-0017 կադաստրային ծածկագրով 0.00158 հա մակերեսով բնակավայրերի, այլ հողերի գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս կատեգորիայի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 28
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ. Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. hawugb khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 մարտի 2023 թվականի N 328-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20 ԹԻՎ
293 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, << Նորմատիվ իրավական ակտերի մասին >> 37-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով Տիգրանուհի Խաչիկի Մազյանի դիմումը.


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դոդս գյուղի վարչական տարածքում գտնվող 04-038-0052-0001, 04-038-0052-0002, 04-038-0052-0003 և 04-038-0052-0004 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերը միավորել և տալ մեկ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Դոդս գյուղ Հ. Բաղդամյան փողոց 3-րդ նրբանցք, թիվ 3 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԵՐԳԻՇԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 28
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ. Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023 թվականի N 327-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ գլխի դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 29.08.2006թ. թիվ 13-Ն հրամանով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2023 թվականի ապրիլի 28-ին ժամը՝ 11:30-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-17/ թափուր պաշտոնի մրցույթ:

2. 2023 թվականի ապրիլի 28-ին ժամը՝ 13:00-ին նշանակել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի /ծածկագիր 2.3-18/ թափուր պաշտոնի մրցույթ:

3. Ապահովել համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հայտարարության հրապարակումը:

4. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԹԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



2023թ. մարտի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023 թվականի N 326-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022թվականի նոյեմբերի 30-ի N145-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար Արմեն Արսենի Արգարյանի կողմից 2023թվականի մարտի 27-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ԶԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տալ հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվություն՝ 2023 թվականի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hmayt khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023 թվականի N 325-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 246 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 3-ի <<Հասցե տալու մասին և համայնքի ղեկավարի փոխարինողի 2023 թվականի փետրվարի 23-ի թիվ 224 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 246-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման նախաբանում <<<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով>> բառերը փոխարինել <<<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



2023թ. մարտի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hmayn khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023 թվականի N 324-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 247 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 3-ի <<Շինության գործառնական նշանակությունը փոփոխելու մասին և համայնքի ղեկավարի փոխարինող 2023 թվականի փետրվարի 23-ի թիվ 227 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 247-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման նախաբանում <<<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով>> բառերը փոխարինել <<<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունվելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023 թվականի N 323-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 245 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 3-ի <<Հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին և համայնքի ղեկավարի փոխարինողի 2023 թվականի փետրվարի 23-ի թիվ 255 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 245-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշման նախաբանում <<<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով>> բառերը փոխարինել <<<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին մասով>> բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2023թ. մարտի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՍԵՆԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hwugb khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 մարտի 2023 թվականի N 322-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով որ, բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի բնակիչ՝ Արայիկ Հարությունի Ավագյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Ե.Չարենցի փողոց 6 բնակելի տուն /04-060-0003-0004 կադաստրային ծածկագիր /հասցեում գտնվող իրեն պատկանող /ըստ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 16.12.2022թ. վճռի՝ քաղաքացիական գործ թիվ ԱՐԴ /7356/02/22/ 0.102 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Ե. Չարենցի փողոց 6 բնակելի տուն հասցեում գտնվող /04-060-0003-0004 կադաստրային ծածկագիր/ գույքային միավորների նկատմամբ քաղաքացի՝ Արայիկ Հարությունի Ավագյանի/ծնված՝ 16.09.1980թ./ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.1017 հա

փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ ենք-շինությունների նկատմամբ բնակելի տուն՝ 134.5 քմ կառուցված՝ 2000թ., աստիճանահարթակ՝ 3.3 քմ, կառուցված 2000թ., բնակելի տուն-նկուղ՝ 73.6 քմ կառուցված՝ 2000թ. և զուգարան՝ 1.2 քմ կառուցված 2000թ.:


2.Շենք-շինությունների մակերեսներն ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Արայիկ Հարությունի Ավագյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4.Արայիկ Հարությունի Ավագյանի դիմումի համաձայն Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի 04-060-0003-0004 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գյուղ Հովտամեջ Ե. Չարենցի փողոց թիվ 6 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2023 թվականի N 321-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24 կետով և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողերի հայտնաբերման նպատակով, ինչպես նաև դրանց իրավական կարգավիճակը ճշտելու, պետական գրանցում ստացված համայնքային սեփականության հողերի վարձակալության տրամադրված պայմանագրերի առկայությունը և դրանց վճարումները ուսումնասիրելու, ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված հողերի պետական գրանցման խնդիրները լուծելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատանքային խմբին՝

ա/ հայտնաբերել համայնքային սեփականություն հանդիսացող հողերը ըստ բնակավայրերի

բ/ ճշտել այդ հողերի իրավական կարգավիճակը /ուժ կողմից է օգտագործվում և ինչ հիմունքներով/

գ/ ճշտել վարձակալության տրված հողերի պայմանագրերի առկայությունը և կատարված վճարումները

դ/ կատարել համայնքային սեփականության հողերի պետական գրանցում իրականացնելու համար պահանջվող գործընթացը /պետական գրանցում չստացած համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը, որոնք հաշվառված չեն անշարժ գույքի հարկման բազայում՝ ըստ բնակավայրերի և ըստ կադաստրային

ծածկագրերի հաշվառել և ներկայացնել Խոյ համայնքի ղեկավարին՝ հետագա կարգավիճակը որոշելու նպատակով/

3. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ Վարազդատ Անտոնյանին, պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ:

4. Աշխատանքային խմբին՝ եռամսյա ժամկետում ներկայացնել զեկուցագիր ավարտված աշխատանքների վերաբերյալ:

5. Աշխատանքներին ներառել նաև Խոյ համայնքի վարչական ղեկավարներին՝ յուրաքանչյուրին իր բնակավայրում կատարվող աշխատանքներով:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 24

Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի
ԹԻՂ 321-Ա ՈՐՈՇՄԱՆ



ԿԱԶՄ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Խոյ համայնքի ղեկավարի տեղակալ -Վարազդատ Անտոնյան

Խմբի անդամներ՝

Համայնքապետարանի աշխատակազմի բյուջետային մուտքերի և ապահովման բաժնի պետ – Ազատ Գրիգորյան

Համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ - Արամ Հակոբյան

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ - Լյուդվիկ Հակոբյան

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի տեղակալ -Նորիկ Նահապետյան:

Աշխատակազմի քարտուղար՝

Ա. Աղաբեյլյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2023 թվականի N 320

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով Լյովա Վարդգեսի Մեղիքսեթյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի վարչական տարածքում գտնվող 04-053-0008-0009 կադաստրային ծածկագրով 0,1468 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Ծիածան գյուղ, 2-րդ փողոց, թիվ 37 բնակելի տուն հասցեն:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 24
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hwugte khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2023 թվականի N 319

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի բնակիչ Հասան Քյալաշի Բաղչոյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Հ.Թումանյան փողոց 30 բնակելի տուն /04-060-0022-0010 կադաստրային ծածկագիր / հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 21.02.2023թ. սեղանամատյան 1283 և ժառանգության իրավունքի վկայագիր 21.02.2023թ. սեղանամատյան 1282 / 0.14 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Հ.Թումանյան փողոց 30 բնակելի տուն /04-060-0022-0010 կադաստրային ծածկագիր / գույքային միավորների նկատմամբ քաղաքացի Հասան Քյալաշի Բաղչոյանի /ծնված 27.05.1969թ/ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.139 հա փաստացի օգտագործվող

հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ բնակելի տուն նկուղ՝ 28,9ք/մ կառուցված 2000թ., աստիճանահարթակ՝ 3ք/մ կառուցված 2000թ., բնակելի տուն՝ 201,4ք/մ կառուցված 2000թ., ծածկ՝ 22,6ք/մ կառուցված 2000թ., հացատուն՝ 9,4ք/մ կառուցված 2000թ., օժանդակ շինություն՝ 24,6 ք/մ կառուցված 2000թ., և անասնաշենք՝ 51,4ք/մ կառուցված 2000թ. :

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Հասան Քյալաշի Բաղչոյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Հասան Քյալաշի Բաղչոյանի դիմումի համաձայն Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի 04-060-0022-0010 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Հովտամեջ Հ.Թումանյան փողոց թիվ 30 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Մ.ԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 24

Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մարտի 2023 թվականի N 318

ՈԳԵԼԻՅ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022թվականի նոյեմբերի 30-ի N145-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Նշան Գաբրիելյանի կողմից 2023թվականի մարտի 23-ին ներկայացրած հայտը.

Որոշում եմ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Նշան Գաբրիելյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2023թվականի I-ին և II-րդ եռամսյակների համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 24
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, ՄՄաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
23 մարտի 2023 թվականի N 317
ՀԱՅՅԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով լիազորված անձ՝ Գառնիկ Արամայիսի Ղազարյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղի վարչական տարածքում գտնվող 04-053-0624-0004 կադաստրային ծածկագրով **0,6654** հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Ծիածան գյուղ, թիվ 1 ջերմոց հասցե:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ



2023թ. մարտի 23
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023 թվականի N 316

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022թվականի նոյեմբերի 30-ի N145-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արագած գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արման Աբրահամյանի կողմից 2023թվականի մարտի 23-ին ներկայացրած հայտը.

Որոշում եմ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արագած գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արման Աբրահամյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2023թվականի II-րդ եռամսյակի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 23
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023 թվականի N 315

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022թվականի նոյեմբերի 30-ի N145-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արագած գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արևիկոս Պետրոսյանի կողմից 2023թվականի մարտի 23-ին ներկայացրած հայտը.

Որոշում եմ՝

- Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արագած գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Արևիկոս Պետրոսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2023թվականի II-րդ եռամսյակի համար:
- Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Վ.Ա. Մանուկյան



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 23
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hmayg khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մարտի 2023 թվականի N 314

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի <<Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու մասին>> թիվ 46-Ն որոշման 6-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N695-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի 6.3.1 կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

- 2023թ-ի ապրիլի 21-ին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքում իմ ղեկավարությամբ անցկացնել «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով շտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՇՈւ):
- ՇՈւ-ի նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝
 - 1) ՇՈւ-ի ղեկավարի տեղակալ՝ Խոյ համայնքի ղեկավարի տեղակալ, համայնքի տարահանման հանձնաժողովի նախագահ Լյուդվիկ Յայլոյանին,
 - 2) ՇՈւ-ի ղեկավարման շտաբի պետ՝ Խոյ համայնքի քարտուղար Աննա Առաքելյանին:
- ՇՈւ-ին ընդգրկել՝
 - 1) Խոյ համայնքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին.
 - 2) Խոյ համայնքի տարահանման հանձնաժողովին.

3) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը.

4) Խոյ համայնքի ղեկավար կազմ, Աղավնատուն, Հայթաղ, Հովտամեջ, Ծաղկալանջ բնակավայրերի ղեկավարներին:

4. ՇՈւ-ի ղեկավարման շտաբի պետ, Խոյ համայնքի քարտուղար՝ Աննա Առաքելյանին՝

1) ապահովել անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և մինչև 2023թ. ապրիլի 14-ը ներկայացնել իմ հաստատմանը.

2) կազմակերպել ուսումնավարժությանը ներգրավվող պաշտոնատար անձանց՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված մասնակիցների միջև.

4) ճշտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

5) ուսումնավարժության անցկացմանը պատրաստ լինելու մասին զեկուցել 2023թ. ապրիլի 15-ին:

5. ՇՈւ-ի մասնակիցներին՝

1) ուսումնավարժության նախապատրաստման հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի հայկական ատոմային էլեկտրակայանի վթարային հակազդման» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային տարահանման» պլաններով նախատեսված միջոցառումները:

3) պատրաստ լինել զեկուցելու ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

7. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Խոյ համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 23

Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, +374(60-88-89-99), էլ. հասցե՝ khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2023 թվականի N 313

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> ՀՀ օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2023MYAX4K, ծածկագիրը և հիմք ընդունելով Վարդան Վալոդյայի Գևորգյանի դիմումը՝ իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի 7-րդ փողոց թիվ 4 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի՝ Վարդան Վալոդյայի Գևորգյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի 7-րդ փողոց թիվ 4 բնակելի տուն վարչական տարածքում գտնվող 04-068-0026-0007 կադաստրային ծածկագրով 0,0878 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 96 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությունները, / 6 քմ մակերեսով բնակելի տուն

կառուցված 2020թ., 9,2 քմ մակերեսով ծածկ կառուցված 2020թ., 2,6 քմ մակերեսով զուգարան կառուցված 2020թ., 46,6 քմ մակերեսով ավտոտնակ կառուցված 2020թ., 17,8 քմ մակերեսով մառան կառուցված 2020թ., 13,8քմ մակերեսով պարիսպ կառուցված 2020թ. /:

2. Ինքնական կառույցների օրիկանացման համար սահմանված վճարը կազմում է 98689 / իննսունութ հազար վեց հարյուր ութսունինը / ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Վարդան Վալդոյայի Գևորգյանը /անձնագիր AN0431692, տրված 04.04.2013թ ,057 -ի կողմից / պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին՝ 98689 / իննսունութ հազար վեց հարյուր ութսունինը / ՀՀ դրամ:/, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա.ՄԵԽԱԿՅԱՆ

2023 թվականի մարտի 22
Խոյ համայնք գ.Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2023 թվականի N 312

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-006-0082-0001 կադաստրային ծածկագրով 0.15756 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Աղավնատուն գյուղ, Հարավային փողոց թիվ 24 հողամաս հասցեն :

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՈՐԳԱՆԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 22
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ. Գեղակերտ, Մաշտոցի 30, +374(93-73-83-17), էլ. հասցե՝ khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2023 թվականի N 311

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> ՀՀ օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2022B2HGGE, ծածկագիրը և հիմք ընդունելով Զիաթխան, Լենա, Զոյա, Մանուշ, Տաթևիկ, Հասմիկ և Սևակ Մանուկյանների դիմումը՝ իրենց պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Շահումյան գյուղի Հովհաննեսի փողոց 14 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացիներ Զիաթխան, Լենա, Զոյա, Մանուշ, Տաթևիկ, Հասմիկ և Սևակ Մանուկյաններին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Շահումյան գյուղի Հովհաննեսի փողոց 14 վարչական տարածքում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 737854/ 04-077-0023-0001 կադաստրային ծածկագրով 0.253 հա հողամասի վրա կառուցված ընդամենը

54.7 քմ արտաքին մակերեսով շինությունները/ 18.9 քմ մակերեսով ինքնական թռչնանոց կառուցված 2005թ. /32.8քմ մակերեսով թռչնանոց, կառուցված 2005թ. 3քմ զուգարան կառուցված 2005թ./:

2. Ինքնական կառույցների՝ 1 քառակուսի մետրը բնակելի նշանակության շինությունների համար 1209 ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Զիաթխան Մանուկյանը /անձնագիր AV0566688 , տրված 16.12.2022թ ,057 -ի կողմից /, Լենա Մանուկյանը /ID 001928944 , տրված 19.04.2014թ ,057 -ի կողմից /, Զոյա Մանուկյանը /անձնագիր AU0318326 , տրված 15.06.2021թ ,057 -ի կողմից /, Մանուշ Մանուկյանը /անձնագիր AU0400525 , տրված 12.11.2020թ ,001 -ի կողմից /, Տաթևիկ Մանուկյանը /անձնագիր AV0659474 , տրված 02.03.2023թ ,031 -ի կողմից /, Հասմիկ Մանուկյանը /անձնագիր AN0749893 , տրված 19.12.2013թ ,046 -ի կողմից / և Սևակ Մանուկյանը /անձնագիր AP0661626 , տրված 14.12.2016թ ,057 -ի կողմից / պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին՝ 66133 /վաթսուն վեց հազար հարյուր երեսուներեք ՀՀ դրամ/, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

5. Զիաթխան, Լենա, Զոյա, Մանուշ, Տաթևիկ, Հասմիկ և Սևակ Մանուկյանների դիմումի համաձայն Արմավիրի մարզի Խոյ համայնքի Շահումյան գյուղի 04-077-0023-0001 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Շահումյան Հովհաննեսի փողոց 14 բնակելի տուն:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2023 թվականի մարտի 22
Խոյ համայնք գ.Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2023 թվականի N 310

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 849 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> ՀՀ օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2022DQHH\$W ծածկագիրը և հիմք ընդունելով Հարություն Կիրակոսյանի դիմումը՝ իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 3-րդ փողոց 86 տնամերձ, 04-021-0025-0012 կադաստրային ծածկագրով հողամասում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի Հարություն Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական տարածքում գտնվող 3-րդ փողոցի թիվ 84 հասցեում /իրավունքի պետական գրանցման վկայականի N 0189976/ կադաստրային ծածկագրով 0,092 հա հողամասի վրա կառուցված ընդամենը 122,9 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ինքնակամ շինությունները /23,30 քմ կիսակառույց շինություն, կառուցված՝ 2001թ., 1,20 քմ աստիճան, կառուցված՝ 2001 թ., 52,80 քմ կիսակառույց շինություն, կառուցված՝ 2001 թ., 19,70 քմ անասնաշենք, կառուցված՝ 2001 թ./:

2. Ինքնակամ կառույցների մեկ քառակուսի մետրը բնակելի նշանակության շինությունների համար՝ 1209 ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Հարություն Կիրակոսյանը /անձնագիր AS 0353492, տրված 29.08.2018թ. 057-ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների հաշվեհամարին՝ **900325188150 148587** /հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր ութսունյոթ ՀՀ դրամ/, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի 04-021-0025-0012 կադաստրային ծածկագրով հողամասին տալ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ, Արշալույս, 3-րդ փողոց թիվ 84 հասցեն:

5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

6. Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 13-ի <<Ինքնակամ կառուցված շինությունը օրինականացնելու մասին>> N 849 որոշումը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 22
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. hawgty khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2023 թվականի N 309

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դոդս գյուղի վարչական տարածքում գտնվող 04-038-0068-0010 կադաստրային ծածկագրով 0,11626 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Դոդս գյուղ, Մոնթեի փողոց թիվ 20 հողամաս հասցեն :

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 22
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hwugte khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2023 թվականի N 308

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղականինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հաշվի առնելով այն, որ բնակելի տունը և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունները բավարարում են <<Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների պահանջները, բնակելի տունը և շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, կառույցները չեն հակասում քաղաքաշինական նորմերը և չեն առաջացնում սերվիտուտ, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, հիմք ընդունելով այն, որ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի բնակիչ Արայիկ Ժորժիկի Արշակյանը դիմել է Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Կոմիտասի փողոց 27 բնակելի տուն /04-006-0031-0008 կադաստրային ծածկագիր / հասցեում գտնվող իրեն պատկանող / ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր 29.11.2022թ. սեղանամատյան 8956 և ժառանգության իրավունքի վկայագիր 29.11.2022թ. սեղանամատյան 8958 / 0.15 հա հողամասի և նրա վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Կոմիտասի փողոց 27 բնակելի տուն հասցեում գտնվող /04-006-0031-0008 կադաստրային ծածկագիր/ գույքային միավորների նկատմամբ քաղաքացի

Արայիկ Ժորժիկի Արշակյանի/ծնված 05.01.1955թ/ գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը օրինական 0.12771 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված բնակելի տան և բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ բնակելի տուն կիսանկուղ՝ 75,5ք/մ կառուցված 1972թ., բնակելի տուն կ/նկուղ՝ 82,5ք/մ կառուցված 1975թ., բնակելի տուն՝ 58,3ք/մ կառուցված 1977թ., բնակելի տուն՝ 101ք/մ կառուցված 1978թ., պահեստ՝ 35,8 ք/մ կառուցված 1950թ., զուգարան՝ 1,3ք/մ կառուցված 1999թ., սանհանգույց՝ 9,9 ք/մ կառուցված 1989թ., պարիսպ՝ 6,2ք/մ կառուցված 1989 թ., պարիսպ՝ 4,6ք/մ կառուցված 1970թ.:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման համապատասխան որակավորում ստացած անձի կողմից:

3.Առաջարկել ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել Արայիկ Ժորժիկի Արշակյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի, հողամասում առկա բնակելի տան, բնակելի նշանակության օժանդակ շենք-շինությունների նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական:

4. Արայիկ Ժորժիկի Արշակյանի դիմումի համաձայն Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի 04-006-0031-0008 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Աղավնատուն Կոմիտասի փողոց 27 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՄԱՐԶԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 22

Խոյ համայնք, գ. Գեղակերտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2023 թվականի N 307

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետով և հիմք ընդունելով Արայիկ Ժորժիկի Արշակյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝


1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-006-0031-00008 կադաստրային ծածկագրով 0,01278 հա հողամասին տալ՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Աղավնատուն գյուղ Կոմիտասի փողոց, թիվ 27 բնակելի տուն հասցեն:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

Վ.Ա. Արմավիր



ՄԵԼԻՇԻ ՄԵԽԱԿՅԱՆ

2023թ. մարտի 22
Խոյ համայնք, գ. Գեղակերտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, էլ. hmayg khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2023 թվականի N 306

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴԻԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022թվականի նոյեմբերի 30-ի N145-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղում գործող «ԳԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավար՝ Գուրգեն Վարդանի Հարությունյանի կողմից 2023թվականի մարտի 22-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

